

վերար Անտոն վ. Մըսըրլեանի քով, որպէս զի վերջինս զինք Հռոմ ղրկէ (նամակ 20 փետր. 1779 ի Պէկօղլուէ առ Պօղոս Եպ. Լեւոնեան Ձեռնագրիչ ի Հռոմ): 1773ին Հռոմ կ'երթայ Սարգիս եւ 24 Մայ. 1774ին Հաւատաքննութեան Ժողովոյն առջեւ հաւատոյ դաւանութիւն տալով՝ Փրօքականտայի Դպրատունը կը մտնէ: Զորս տարի ետքը՝ Հռոմայ Հայոց Ս. Մարիամ Եգիպտացի եկեղեցւոյ խոստովանահայր Անտոն վ. Արութիւնեանէն 5 Մայիս 1777 թուակա-նաւ ուղղափառութեանը վկայագիրն առած՝ հիւանդութեան պատճառաւ՝ ըստ ինչի եւ առաջնորդացն հրամանով կ'երթայ Լիվոռնոյ-Չմիւռ-նիա-Թէքիրտաղ: Հոն ազգականներէն եւ ազգակիցներէն հաւատքին պատճառաւ հալածուելով՝ Պոլիս կու գայ 1778 ձմեռը, ուր գաղա-տացի Տիմոթէոս վ. Սիմոնեան զինք կը խնամե եւ Սէն Լուի Քաթուլին կրօնաւորաց քով կը տեղաւորէ ամսական 10 ղրուշով: Ասկէ տեղեկութիւններ գրած է Սարգիս ի Հռոմ՝ Ժամանակին դէպքերուն վրայ, զորոնք ուրիշ տեղ կը յիշատակեմ: Ինքն ալ շատ նեղութիւններ կրեց, որոնց պատճառներէն մէկն ալ կը յիշէ Թէքիր-տաղի Առաջնորդը Յակոբ Եւդոկիացի, աշակերտ Յակոբ Նալեան Պատրիարքի, որ 1778ին Պոլիս փոխադրուած եւ 1779 Փետր.ին Պատրիար-քին վէքիլն եղած էր: Այս Յակոբ 1919ին ի Կ. Պոլիս մեռաւ 121 տարեկան:

Երբ Յարութիւն Արքեպ. Բասենցի 1781ին վերջը Պոլսէն փախաւ եւ 1782ին Թրիեստ հաս-